Հաշվետվություն
2018 թվականի մայիսի 31-ից հունիսի 1-ը ք.Դուշանբե (Տաջիկստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. ***Անունը, Ազգանունը***

Արարատ Միրզոյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

ՀՀ առաջին փոխվարչապետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

Դուշանբե (Տաջիկստանի Հանրապետություն) 2018թ. մայիսի 31-ից հունիսի 1-ը

4. ***Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)***

Մասնակցություն ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհդի նիստին:

5. ***Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը***

2018թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ երկկողմ հանդիպում Տաջիկստանի Հանրապետության վարչապետ Կ.Ռասուլզոդայի հետ: Քննարկվեցին տնտեսական երկկողմ համագործակցության օրակարգային հարցեր, ինչպես նաև նախանշվեցին համագործակցության նոր ոլորտներ: Տաջիկական կողմի հետ քննարկվեցին նաև ոսկերչության զարգացմանն ուղղված հարցեր, մասնավորապես տաջիկական կողմին առաջարկվեց ոսկին՝ որպես հումք, տեղափոխել Հայաստան, ապա այստեղ վերամշակել, վերածել զարդեղենի և ուղարկել Տաջիկստան: Այս ոլորտում համագործակցությունը, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների կոնսերվացման հայկական փորձը մեծ հետաքրքրություն առաջացրեց տաջիկական կողմի մոտ:

Տեղի ունեցավ ԱՊՀ երկրների վարչապետերի հետ հանդիպում նաև ոչ ֆորմալ միջավայրում, այդ թվում և «առանց փողկապների» ընթրիքի ընթացքում: Թե՛ ոչ ֆորմալ շփումների, թե՛ պաշտոնական հանդիպումների ընթացքում ԱՊՀ անդամ պետությունների գործընկերներին փոխանցեցի մի քանի կարևոր ուղերձներ, այդ թվում այն մասին, որ Հայաստանը շարունակելու է ԱՊՀ շրջանակներում

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆ
Մուտք թիվ 44-12/20781
«06» 06 2018

համագործակցության զարգացումը: Նաև տեղեկացրեցի, որ Հայաստանում տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների բերումով նախագահի լիազորությունները հիմնականում փոխանցվել են վարչապետին, ուստի այսուհետ ԱՊՀ պետությունների ղեկավարների ձևաչափում Հայաստանը ներկայացնելու է ՀՀ վարչապետը, իսկ կառավարությունների ղեկավարների խորհրդում՝ ՀՀ առաջին փոխվարչապետը:

Պատվիրակության անդամներ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Արծվիկ Մինասյանը, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների փոխնախարար Հակոբ Արշակյանը, արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը հնարավորություն ունեցան առարկայական հանդիպումներ ունենալ իրենց գործընկերների հետ, քննարկել մեր տնտեսության համար հեռանկարային մի շարք հարցեր, այդ թվում՝ էներգակիրներին, ոսկեգործությանը, գյուղանտեսությանը վերաբերող կոնկրետ ծրագրեր:

2018թ. հունիսի 1-ին մինչ ընդլայնված և նեղ կազմով նիստերը, տեղի ունեցավ ԱՊՀ կառավարությունների ղեկավարների հանդիպումը Տաջիկստանի Նախագահ Է.Ռախմոնի հետ, որտեղ և քննարկվեցին երկկողմ և բազմակողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

Տեղի ունեցավ նաև նեղ կազմով ԱՊՀ կառավարությունների ղեկավարների նիստը, որի շրջանակներում հանդես եմ եկել ելույթով, որտեղ հստակ նշվել է նոր ձևավորված կառավարության մոտեցումները երկկողմ և բազմակողմ հարաբերությունների զարգացման առնչությամբ, այդ թվում ԱՊՀ, ԵԱՏՄ և այլ միջազգային կառույցներում: Ելույթում անդրադարձ եմ կատարել օրակարգային հարցերին և կարևորել դրանց ընդունումը: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև տնտեսական փոխգործակցությանն առնչվող արդի հարցեր:

Ընդլայնված կազմով նիստի ժամանակ ելույթով հանդես են եկել հյուրընկալող երկրի՝ Տաջիկստանի վարչապետ Կ.Ռասուլզոդան, ԱՊՀ գործադիր քարտուղար Ս.Լեբեդևը, ներկայացվել են մի շարք զեկույցներ օրակարգային հարցերի վերաբերյալ:

6. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ընդլայնված կազմով նիստի ընթացքում ՀՀ կողմից ստորագրվել են օրակարգում (օրակարգը կցվում է) ներառված բոլոր փաստաթղթերը: Ստորագրվել են մի շարք համաձայնագրեր, այդ թվում՝ մտավոր սեփականության շուկայի ձևավորման,

միջպետական ստանդարտացման փաստաթղթերի տարածման, էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնների գործածության և այլ ոլորտներին վերաբերող:

Գործուղվող՝

Առաջին փոխվարչապետ Ա.Միրզոյան

Ստորագրություն, ամսաթիվ

06.06.2018թ.

ПОВЕСТКА ДНЯ
заседания Совета глав правительств Содружества Независимых Государств

1 июня 2018 года **город Душанбе**

ДЛЯ РАССМОТРЕНИЯ В УЗКОМ ФОРМАТЕ

Обмен мнениями по актуальным вопросам экономического взаимодействия в Содружестве Независимых Государств.

Об Информации председателя Рабочей группы высокого уровня о ходе переговоров по проекту Соглашения о свободной торговле услугами.

О проведении очередного заседания Совета глав правительств Содружества Независимых Государств.

ДЛЯ РАССМОТРЕНИЯ В ШИРОКОМ ФОРМАТЕ

1. О Соглашении о формировании и развитии рынка интеллектуальной собственности государств – участников СНГ.

2. О Концепции сотрудничества государств – участников СНГ в области инновационного развития энергетики и разработки передовых энергетических технологий и Плане первоочередных мероприятий по ее реализации.

ДЛЯ ПОДПИСАНИЯ БЕЗ ОБСУЖДЕНИЯ

3. О Соглашении о сотрудничестве государств – участников СНГ в области обращения с отходами электронного и электротехнического оборудования.

4. О Соглашении о распространении документов по межгосударственной стандартизации.

5. О Протоколе о внесении изменений в Соглашение о сотрудничестве и взаимопомощи в таможенных делах от 15 апреля 1994 года.

6. О Порядке разработки и финансирования межгосударственных инновационных проектов и мероприятий в рамках Межгосударственной

программы инновационного сотрудничества государств – участников СНГ на период до 2020 года.

7. О Комплексе совместных действий государств – участников СНГ по профилактике и борьбе с бешенством на период до 2025 года.

8. О результатах проведенных в 2017 году документальных ревизий финансово-хозяйственной деятельности органов Содружества, финансируемых из единого бюджета органов СНГ.

9. О Положении о Съезде учителей и работников образования государств – участников Содружества Независимых Государств.

10. О Международном молодежном проекте государств – участников Содружества Независимых Государств «100 идей для СНГ».

11. О внесении изменений в Положение о Секретариате Совета министров обороны государств – участников Содружества Независимых Государств.

12. О кадровых назначениях:

12.1. О заместителях Председателя Исполнительного комитета – Исполнительного секретаря Содружества Независимых Государств.

12.2. О Председателе Межгосударственного статистического комитета Содружества Независимых Государств.